Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

9503

Ученый друг университету

017.4
Ч-97

1907

(4)
22 MAY 2009

ՅՈՒՅԱԿ

ԳՐՈՑ ՏՊԱԳՐԵԼՈՅ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՅ ԱԹՈՌՈՅՍ

ՍՐԲՈՅ ՅԱԿՈՎԲԵԱՆՑ

ՅԵՐՈՒՍԱՂԷՄ

1907

0.17.4
Ա-97

30 JAN 2014
9503

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ

Գրոց գիները նշանակուած են միջակ կազմին եւ փառակազմի վրայ Երուսաղէմի համար ընթացիկ, իսկ հեռաւոր Քաղաքաց եւ Գաւառաց համար ողջ դրամ. Օսմ. լիրային 100 ղուրուշի հաշուով. Կաշիակազմ կամ մասնաւոր կազմ ունեցող մատեաններուն գինը տարբերութիւն կ՚ունենայ նշանակուածներէն.

Ս. Աթոռոյս Տպարանէն ելած Գրեանքն կը ծախուին գլխաւորապէս 'ի Ս. Վանս, 'ի փոխանորդարանի Կոստանդնուպոլսոյ, 'ի Բերիա, և 'ի Գերմանիկ յատուկ գործակալաց ձեռամբ.

Գին Ցուցակիս 40 փարայ.

0174
Ա-97

ՑՈՒՑԱԿ
ԳՐՈՑ ՏՊԱԳՐԵԼՈՑ
Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՑ ԱԹՈՌՈՅՍ ՍՐԲՈՑ ՅԱԿՈՎԲԵԱՆՑ
ՅԵՐՈՒՍԱՂԷՄ

Ա.

	Կիսակազմի գինը Ղշ.	Փր.	Փառակազմի գինը Ղշ.
ԱԳՆԷՍ, բարոյական վէպ. Թարգմանեաց 'ի Հայերենէ 'ի Տաճկերէն Յ. Քիւրքճեան Հայ տառերով և Տաճիկ լեզուաւ, տպագրեալ 'ի 1872 ամի. ութածալ, 130 երես.	4		
ԱՂՕԹԱԳԻՐՔ ՓՈՔՐ, ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ. աշխատասիրեաց Կ. Յ. Ե. տպեալ 'ի 1867 ամի. ութածալ, երես 108. բոլոր Ս. Տեղեաց մէջ առանձին առանձին աղօթելու համար աշխարհաբար սրտաշարժ աղօթքներ,	2		
ԱՄԵՆ ՄԱՐԴՈՅ ԲԱՐԵԿԱՄ ԿԱՄ ԱՌՈՂՋԱԿԱՆ. գրեաց Մ. Վ. Մարկոսեան, տպեալ 'ի 1873. ութածալ, երես 192. յորում աշխարհաբար լեզուաւ բովանդակուած են մարմնաւոր և հոգեւոր կենաց առողջապահութեան ընտիր խրատներ (*).	2		
ԱՆՈՒՐՋՔ Ի ՍԻՕՆ. գրեաց Մ. Թամթուլ. տպեալ 'ի 1869. ութածալ. 44 երես. գրաբար ոտանաւորներ են, Քրիստոսի անօրէնութեանց վերայ յօրինուած.	1	20	
ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ ՀԱՄԱՌՕՏ. 'ի Գ. Ս. Խապայեանէ. տպեալ 'ի 1874. ութածալ, 364 երես. յորում պարունակին բնական, քաղաքական և ուսումնական բաժանմունք աշխարհագրական գիտութեան աշխարհաբար լեզուաւ, դասական կարգաւորութեամբ և դիւրըմբռնելի եղանակաւ 'ի պէտս Ազգային դպրոցաց.	7		14
ԱՌԱՔԻՆՈՒԹԵԱՆ ՃԱՄԲԱՅ, ԿԱՄ ՄԵՆՏՈՐ ՄԱՆԿԱՆՑ. Թարգմանեաց յիտալերենէ Տ. Հ. Սուալեանեան. Բ. տիպ.			

(*) Աստղանիշով նշանակուածները սպառած են.

	Դիս. Ղ.	Դիս. Փ.	Փոխ. Ղ.
'ի 1872 · ուԹածալ · 236 երես · աշխարհաբար գեղեցիկ և համառօտ պատմութիւններ դպրոցական մանկանց ընթերցանութեան համար ·	7		14
Աւետարան Ատենի · տպեալ 'ի 1899 · քառածալ · 286 երես · ցուցակաւ 'ի միասին, ըստ արարողութեան Հայաստանեայց Առաքելական Ս· Եկեղեցւոյ ·	30		45
Աւետարան Իղձարերից · տպեալ 'ի 1900 · քառածալ · վայելուչ գիրքով և խոշոր տառերով ·	20		
Աւետարան ճաշոի · տպեալ 'ի 1868 · քառածալ ·356 երես · տոնացոյցով հանդերձ, յորում օրական և տոնական կարգաւ գրուած են Աւետարանք ըստ իւրաքանչիւր աւուրց ·	30		45
Աւետարան · միջակ գիրքով · տպեալ 'ի 1898 ·	6		12
Աւետարան Ամենափոքր · տպեալ 'ի 1875 · ուԹածալ · 488 երես · մանր ու գեղեցիկ տառերով եւ ծոցակիր գիրքով · (*) ·	8		15

Բ

ԲաՀՏ · (Թարգմանեալ 'ի Գաղղիականէ) ·	10		
ԲանաՀօսութիւն Աշակերտուհեաց մէջ · Բ· տիպ · 'ի 1874 · ուԹածալ · 80 երես · ընտանեկան կենաց և բարոյական կրթութեան վերաբերեալ տրամախօսութիւնք (*) ·	1		
Բարոյական պատմութիւններ · տպեալ 'ի 1875 · ուԹածալ · 399 երես · Թարգմանեցին Ժառանգաւոր Սանուէնք գրաբարէ յաշխարհաբար հանդերձ յաւելուածովք (*) ·	7		14
Բուցատրութիւն Հրաշարմանն եւ Զղջմանն · գրեաց Մկրտիչ Վ· Արծրունեան · տպեալ 'ի 1854 · ուԹածալ · 232 երես · յորում պարզ գրաբար լեզուաւ բացատրուած են · Հրաշարիմն · Մէջայն · Ողորմելին · և Յիւնոյ · Ակիարն ամենայն · Առաւօտ լուսոյ երգեն · (*) ·	6		
Բնական պատմութիւն ·	8		
Բովանդակութիւն Աշխատին սեղէականութեանց · տպեալ 'ի 1880 · ուԹածալ · 125 երես · կը նկարագրէ մանրամասնօրէն՝ Աղգային սեղականութիւնները, ընկերովի իրաւունքներն, արարողութիւնները եւ սովորութիւնները 'ի Տնօրինական Ս· Տեղւոյ ·	3		

ՀՍՍՌ-ԱԳՄ ՍՍՌ
38060-67

Գ

	Դիս. Ղ.	Դիս. Փ.	Փոխ. Ղ.
Գագիկ Վերջին Արքայ Հայոց Բագրատունի, գրեաց Ս· Կ· Տ· Մինասեան · տպեալ 'ի 1872 · ուԹածալ · 192 երես · ողբերգութիւն աշխարհիկ լեզուաւ, յորում յիշեալ հայրենասէր Թագաւորի վերջին կենաց պատկերն նկարագրուած է Թատերական ձեւով (*) ·	5		
Գիտութիւն զանազանութեան ·	5		
Գիրք բնութեանց ·	6		
Գիրք խօսակցութեան · գրեաց Տէր Գրիգոր Ղ· Գ· տիպ· 'ի 1882 · ուԹածալ · 80 երես · Հայերէն տառերով և տաճկերէն ու Հայերէն լեզուաւ շարադրուած տաճկախօսութեան համար ·	2		
Գործք Առաքելոց · տպեալ 'ի 1868 · ուԹածալ · 438 երես	6		12
Գործք Առաքելոց Ամենափոքր · տպեալ 'ի 1876 · ուԹածալ · 580 երես · մանր ու գեղեցիկ տառերով եւ ծոցակիր գիրքով ·	8		15
Գործք ոսկեղինիկ սամուէլ Դաբրի · տպեալ 'ի 1867 · ուԹածալ · 158 երես · աշխարհիկ լեզուաւ եւ հրէական կարուկ սճով շարադրուած, յորում նոյն ինքն Սամուէլ Դաբրին իւր քահանայապետին նամակներ ուղղելով Հին ուխտի և Օրինաց արգէն խափանումն · Քրիստոսի յաշխարհ գալն · Նոր Օրինաց և Ուխտի հաստատութիւնն, Հրէից ազգի հազարաւոր տարիներ ցիր եւ ցան Թափառումն մարգարէական եւ պատմական ապացոյցներով կը հաստատէ · Թարգմանեաց Մելքիսեդեկ գաղիր ·	3		
Գողգոսան · տպեալ 'ի 1906 · ուԹածալ · 124 երես · Քրիստոսի բոլոր Տնօրինական տեղեաց վրայ յօրինուած Հայերէն և Տաճկերէն լեզուաւ ոտանաւորք ·	3		

Դ

	Դիս. Ղ.	Դիս. Փ.	Փոխ. Ղ.
Դասագիրք ընթերցանութեան կամ նոր նախագիտելիք · աշխատասիրեաց Ս· Պ· Փափազեան · տպեալ 'ի 1868 · ուԹածալ · 224 երես · նորուս մանկանց համար գիւրըմբռնելի եղանակաւ շարադրուած · յորում կը բովանդակին մանր աղօթքներ · բարոյական պատմութիւններ և զանազան զբօսալի առակներ ·	5		

57656-Ա.Հ.

	Կէս. Ղշ.	Փր	Փռ. Ղշ.
ԴԱՍԱԳԻՐՔ ԹՈՒԱԳԻՏՈՒԹԵԱՆ. *աշխատասիրեաց* Ս. Գ. *Փափազեան, Դ. տիպ. ՚ի* 1869. *ութածալ.* 140 *երես. աշխարհաբար լեզուաւ դպրոցաց համար.*	3		

Ե

	Կէս. Ղշ.	Փր	Փռ. Ղշ.
ԵՂԻՇԷ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՎԱՍՆ ՎԱՐԴԱՆԱՆՑ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ, *տպեալ ՚ի* 1865. *ութածալ,* 431 *երես. Պատմութիւն Եէ դարու, ուր պարզ գրաբար լեզուաւ, պատմական գեղեցիկ ոճով գեղուն զգացմամբ նկարագրուած է Վարդանանց նահատակութիւնն, Պարսից կողմէն Հայոց ազգի կրած նեղութիւնքն, Վասակի ուրացութիւնն, Ղեւոնդեանց Մարտիրոսութիւնն եւ առհասարակ Հայոց ազգի քրիստոնէական հաւատոյ յաղթանակն.*	7		14
ԵՐԵՒՈՅԹ ԿՐՒՑ. *գրեաց Գրիգոր Վ. Կ. Պ. տպեալ ՚ի* 1851, *ութածալ,* 176 *երես. յորում պարզ գրաբար լեզուաւ բացատրուած են մարդոյ կիրքերն եւ նոցա ազդեցութիւնները.*	7		
ԵՐԿԱՄԵԱՅ ՊԱՆԴԽՏՈՒԹԻՒՆ Ի ՀԱՊԷՇՍՏԱՆ, *յօրինեաց Տիմոթէոս Վ. Սափրիչեան. տպեալ ՚ի* 1871, *երկու հատորէ բաղկացեալ, աշխարհաբար լեզուաւ, յորում բովանդակին զանազան պաշտօնական նամակք. Գեր. Սահակ Եպիսկոպոսի և հեղինակին Երկամեայ Պանդխտութեան եւ գերութեան պատմութիւնն և Հապէշից կրօնական, քաղաքական վարուց եւ բարուց նկարագրութիւնքն.*	20		30
— *Նոյնն՝ Գաղղիարէն.*	20		30
ԵՐԿՈՒ ԽՕՍՔ ԵԿԵՂԵՑՒՈՅ ՊԱՇՏՕՆԷԻՑ ՈՒՂՂՈՒԱԾ, *՚ի* Մ. Վ. *Մարկոսեանէ, տպեալ ՚ի* 1872, *ութածալ,* 179 *երես. յորում մաքուր աշխարհաբար լեզուաւ բացատրուած են եկեղեցականաց մէն մի պարտականութիւնքն.*	3		
ԵՓՐԵՄ ԽՈՒՐԻ. *Թարգմանութիւն Նախնեաց, յԱսորոց լեզուէ, Ե. տիպ. ՚ի* 1901, *ութածալ,* 496 *երես. փոքրագիր Աղօթագիրք, յորում պարունակուած են Եփրեմի Խուրւոյն աղօթքներն, և շաբաթի իւրաքանչիւր աւուրց աղօթելու համար յատուկ Ապաշխարութեան Սաղմոք, Շարականք, Նարեկ եւ Գառնեցւոյն աղօթքներն եւ ամբողջ «Եկեսցէն».*	7		14

Ջ

	Կէս. Ղշ.	Փր	Փռ. Ղշ.
ՋԱՆԱԶԱՆՈՒԹԻՒՆ ՀԻՆԳ ԴԱՐՈՒՑ. *հեղինակութիւն Ագրիանուպօլսեցի և Ս. Երուսաղէմի միաբան Պօղոս Ս. Պատրիարքի Կ. Պոլսոյ, Դ. տիպ ՚ի* 1862 *քառածալ, Գ. հատոր, Հայ գրով. Տաճիկ բարբառով, բացատրութիւն Հին եւ Նոր Կտակարանի. յորդորականներով հանդերձ.*	40		70

Ը

	Կէս. Ղշ.	Փր	Փռ. Ղշ.
ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ *Ներսիսի Շնորհալւոյն, տպեալ ՚ի* 1871, *ութածալ.* 334 *երես. ուր գրչագրաց հետ բաղդատուած եւ ծանօթութեամբ տարբերութիւնքն նշանակուած, յորում պարունակին,* Ա. *Խրատական և յորդորական Թուղթք առ համօրէն ազգս Հայոց և առ մասնաւոր անձինս.* Բ. *Թղթակցութիւնք Յունաց Մանուէլ կայսեր եւ Միխայէլ Պատրիարքին ընդ Ներսիսի Շնորհալւոյն, ՚ի պատճառս դաւանաբանական խնդրոց, որովք խոտահերքին Թիւր և անուղղի կարծիք Յունաց.* Գ. *Թուղթք ՚ի զանազան ժամանակս առ այլ և այլ անձինս.*	18		28

Թ

	Կէս. Ղշ.	Փր	Փռ. Ղշ.
ԹԱՆԳԱՐԱՆ ԽՐԱՏՈՒ *յօրինեաց Ագրիանուպօլսեցի և Ս. Երուսաղէմի միաբան Պօղոս Ս. Պատրիարք Կ. Պոլսոյ, Գ. տիպ. ՚ի* 1870. *երկու հատ. քառածալ,* 443 *երես. պարզ գրաբար լեզուաւ։ Առաջին հատորոյ մէջ Առաքինութեանց, իսկ երկրորդին մէջ՝ մոլութեանց վերայ կը խօսի, վկայութեամբք Ս. Գրոց և սրբազն իմաստասիրաց.*	18		28
ԹԱՓՕՐԻ ՏԵՏՐԱԿ ՏԱՐԵԿԱՆ. *տպեալ ՚ի* 1839. *ութածալ,* 132 *երես. կարգադրութիւն Ս. Յարութեան տաճարին մէջ կատարուած տարեկան Թափօրներու և հանդէսներու.*	4		
— *Նոյնն՝ Շաբաթական. տպեալ ՚ի* 1879.	4		
— *Նոյնն, Ս. Յակոբայ տաճարին մէջ իւրաքանչիւր տարի կատարուած հանդիսից եւ Թափօրից համար. տպեալ ՚ի* 1869.	4		

	Կէս. Ղշ.	Կէս. Փր	Փառ. Ղշ.
Ժ			
ԺԱՄԱԳԻՐՔ ԱՏԵՆԻ. ՚ի տպեալ ՚ի 1899. քառածալ, 563 երես. Սաղմոսի և Տօնացուցի համդերձ.	50		65
ԺԱՄԱԳԻՐՔ, խաշըրագիր, տպեալ ՚ի 1895. ութածալ, 650 երես. փայլուն տպագրութեամբ.	20		30
ԺԱՄԱԳԻՐՔ ամենափոքր, ծոցակիր դիրքով. տպեալ ՚ի 1903. ութածալ, 660 երես.	10		15
ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ Պատմութիւն Երուսաղէմի. Աշխատասիրութիւն Տ. Աստուածատուր Եպիսկոպոսի.	23		
Խ			
ԽՆԴԻՐ Ս. ՏԵՂԵԱՑ ԵՒ ՆՈՐԱ ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹԻՒՆՆ. տպեալ ՚ի 1871. ութածալ. 292 երես. Ս. Տեղեաց մէջ, մանաւանդ Ս. Յակոբայ, Ս. Փրկչի, Ս. Ծննդեան և քառանից այլին մէջ միւս քրիստոնեայ ազգաց մեր ունփականութեանց դէմ ՚ի գործ դրած բռնաբարութեանց նկարագրութիւնն, և գերեզմանատանց վերայ եղած 1870 թուին պաշտօնական քննութիւնն.	5		
ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆ Ս. ՊԱՏԱՐԱԳԻ. տպեալ ՚ի 1842. քառածալ, 191 երես. բաց ՚ի յաւելուածէն. գործ Ներսիսի Լամբրոնացւոյ, բացատրութիւն սաղմոսաց. աղօթից եւ օրհնութեանց հրաշալի խորհրդոյ Ս. Պատարագին, որ ՚ի Խորհրդատետրի (*).	10		
ԽՈՐՀՐԴԱՏԵՏՐ Ս ՊԱՏԱՐԱԳԻ. տպեալ ՚ի 1873. քառածալ, 36 երես.	13		
ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆ ՚ի վերայ Չարչարանաց Քրիստոսի, Աշխատասիրութիւն. Տ. Աւետիս Վրդ. Յովհաննէսեանի.	5		
Կ			
ԿԵԱՆՔԷ ԱՌՆՈՒԱԾ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ.	3		
ԿԱՐԴԱԴՐՈՒԹԻՒՆ ԱՌՈՂՋՈՒԹԵԱՆ. աշխատասիրեաց Գ. Աւետեան Ջաքարեանց. տպեալ ՚ի 1871. ութածալ, 262 երես, յորում առողջութիւն պահպանելու համար պարզ գրաբար լեզուաւ եւ փորձառու գիտութեամբ նշանակուած են կարեւոր խրատք, ընտիր և օգտակար դեղորայք և նոցա գործածութեանց զգուշաւոր եղանակքն.	5		

	Կէս. Ղշ.	Կէս. Փր	Փառ. Ղշ.
ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ ՓԱՍԿԱԼԱՑ. Թարգմանեաց ՚ի Գաղղիերէնէ աշխարհաբար լեզուաւ Մ. Ս. Տ. Ստեփանեան. տպեալ ՚ի 1869. ութածալ, 94 երես.	2		
ԿԻՊՐԻԱՆՈՍ. Աղօթագիրք.	4		
ԿԻՒՐԱԿԷ կամ ՏԷՐՍԻՆԱԿԱՆ ՕՐ.	2		
ԿՏԱԿԱԳԻՐ ՀՈԳԵՇԱՀ ԲԱՆԻՑ, գործ Մարգարայ Ջ. Խաչենց, տպեալ ՚ի 1853. ութածալ. 224 երես. զանազան նիւթոց վերայ պարզ գրաբար լեզուաւ և սահուն ոճով նամակներ, զորս հեղինակն առ իւր որդին ուղղած է, իւր խրատական խօսքերն Ս. Գրոց վկայութեանց վերայ հիմնելով.	6		
ԿՐԹԱՐԱՆ ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԲԱՆԻՑ. Թարգմանաբար աշխատասիրութիւն Մելքիսեդեկ Վարդապետի Մուրատեանց, աշխարհիկ լեզուաւ, իբրեւ դասեր բաժանուած և բացատրուած. ութը տետրը մի կազմ.	12		
Ա. Դաս, Սիմոն Պետրոս.	1	20	
Բ. » Սամարացին.	1	20	
Գ. » Որդիք Աստուծոյ.	1	20	
Դ. » Աման անուշահոտութեան.	1	20	
Ե. » Անտարբերութիւն կրօնական.	1	20	
Զ. » Արտասուք և Երգ.	1	20	
Է. » Տաճարի քարերը.	1	20	
Ը. » Հերմաս և Ոնեսիմ.	1	20	
Հ			
ՀԱՄԱԲԱՐԲԱՌ Ս. ԳՐՈՑ. Աշխատասիրութիւն Տ. Թադէոս Վրդ. Եկաւեանի.	136		
ՀԱՄԱՌՕՏՈՒԹԻՒՆ ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՈՒՍՄԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ Ս. ԵԿԵՂԵՑՒՈՅ. աշխատասիրութիւն Պետրոսի Շանշեանց Բ. տիպ ՚ի 1873, ութածալ, 192 երես. որ պարզ և դիւրըմբռնելի եղանակաւ, աշխարհաբար լեզուաւ և դասական կարգաւորութեամբ ամփոփած է համառօտիւ քրիստոնէական ուսումն ՚ի պէտս Ազգային դպրոցաց. Սոյն գիրքն նախ ՚ի Պոլիս հրատարակուեցաւ Արարատեան աշխարհիկ բարբառով եւ ապա ՚ի Ս. Աթոռս տաճկաստանի հայ բարբառով.	4		

	Կէս. Ղր.	Կէս. Փր.	Փռ. Ղր.
ՀԱՅԵԼԻ ՎԻՐԱՅ. գրեաց Նոտամիջցի Տ. Պօղոս քահանայ, տպեալ 'ի 1852, ութածալ, 220 երես. եօթն մահացու մեղաց վերայ գրաբար լեզուաւ ոտանաւորք (*).	6		
ՀԵԳԵՐԷՆ. տպեալ 'ի 1881. որ է Սաղմոսի առաջի կանոնն, յատկապէս նորուս մանկանց համար խոշոր տառերով տպուած.		30	
ՀԵՆՐԻԿՈՍ ԵՒ ՄԱՐԻԱՄ. բարոյական վէպ, թարգմանեաց 'ի Գաղղիերենէ 'ի Հայերէն աշխարհաբար լեզուաւ Պ. Յովհաննէս, Թ. տպեալ 'ի 1870. ութածալ, 109 երես.	2	20	
ՀՐԱՀԱՆԳ ՍԻՐՈՅ. աշխատասիրեաց Յովսէփ Վարժապետ Մալէզեան. տպեալ 'ի 1870. ութածալ, 132 երես. հարց և պատասխանի ձեւով և աշխարհաբար լեզուաւ. ուր Ս. Գրոց վկայութեամբք կ'ուսուցանէ հեղինակն՝ թէ ի՞նչ է ճշմարիտ սէրն, և ի՞նչ նշան, ի՞նչ յատկութիւն, ի՞նչ նպատակ և ի՞նչ վախճան ունի.	2		
ՀՐԱՒԻՐԱԿ ԵՐԿՐԻՆ ԱՒԵՏԵԱՑ.	5		10

Ղ

	Կէս. Ղր.	Կէս. Փր.	Փռ. Ղր.
ՂԵՐՈՒԲՆԱՅ ԵԴԵՍԱՑԻ, եւ Եսայի կաթողիկոս Աղուանից. տպեալ 'ի 1868. ութածալ, 160 երես. քանի մի ձեռագրաց բաղդատութեամբ, տպագրուած հանդերձ ծանօթութեամբ, յորում են — Նախ՝ Թուղթ Աբգար Հայոց Նախահաւատ Թագաւորի առ Քրիստոս. քարոզութիւն Թադէոսի առաքելոյն. Գիւտ խաչին Քրիստոսի յԵրուսաղէմ. — Երկրորդ Պատմութիւն համառօտ Աղուանից երկրին 'ի Տ. Տ. Եսայի Աղուանից կաթողիկոսէ Հասան Ջալալեանց, ուր կը պատմէ Պարսից թագաւորութեան սկզբնաւորութիւնն, իշխանութեանց խանգարումն, հակառակութիւնքն Աղուանից մէջ, Հայոց ազգին հասուցած չարիքներն և Վրաց Վախթանգ թագաւորին Գանձայ գալն.	5		

Ճ

	Կէս. Ղր.	Կէս. Փր.	Փռ. Ղր.
ՃԱՆԱՊԱՐՀ ԵՐԿՆԻՑ.	7		
ՃԱՇՈՑ ԳԻՐՔ. տպեալ 'ի 1873. քառածալ, երկու հատորի բաժնուած, ընտիր պատկերներով, 816 երես.			

	Կէս. Ղր.	Կէս. Փր.	Փռ. Ղր.
զանազան գրչագիր և տպագիր Աստուածաշունչ Գրոց հետ բաղդատուած և ընտիր թղթոյ վերայ խոշոր տառերով մաքուր տպուած.	300		350
ՃԱՌ ՀԱՂՈՐԴՈՒԹԵԱՆ. աշխատասիրեաց Յովսէփ Վարժապետ Մարտիրոսեան Արաբկերցի, տպեալ 'ի 1860. ութածալ, 75 երես.	4		
ՃԱՌՔ ԴՊՐՈՑԱԿԱՆՔ. տպեալ 'ի 1867. ութածալ, 31 երես, Ճշմարտութեան, Դաստիարակութեան, Մտաց Լուսաւորութեան և Վարդանանց վերայ խօսուած ճառեր են, զորս գրած են ժառանգաւոր Աշակերտք (*).		30	
ՃԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ ԱՌ ՋԵՌՆ. աշխատասիրեաց Եղիազար Մուրատեան, տպեալ 'ի 1868. ութածալ, 132 երես. դպրոցաց համար համառօտ ձեւով և աշխարհաբար լեզուաւ.	3		

Մ

	Կէս. Ղր.	Կէս. Փր.	Փռ. Ղր.
ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ ՆԱԽՆԵԱՑ. տպեալ 'ի 1856. ութածալ, 216 երես, յորում է Գրիգորի Նարեկացւոյն և Վահրամ վարդապետին հաւատոյ և խոստովանութեան վերայ խօսած գրաբար ընտիր ճառերն.	6		
ՄԱՏԹԷՈՍ ՈՒՌՀԱՅԵՑԻ. տպեալ 'ի 1869. ութածալ, 598 երես ծանօթութեամբ հանդերձ. գործ ԺԲ. դարու. ժամանակագրական պատմութիւն, սկսեալ 952 թուականէն հասուցանէ մինչ 1136 թուականն Քրիստոսի, ուր նշանակուած են 184 տարուան միջոցին պատահած անցքերն, (զորս քաղած է զանազան յիշատակարաններէ) և իւր ժամանակի Հայոց կրած տառապանքն և քրիստոնէական նահատակութիւնքն. Իսկ իւր աշակերտն, Գրիգոր երէցն, 1136 թուականէն նոյն պատմութիւնն նոյն ոճով շարունակելով կը հասուցանէ մինչեւ 1162 թուականն.	14		25
ՄԱՇՏՈՑ կամ կանոն Սրբազան Արարողութեանց Ս. Եկեղեցւոյ Հայաստանեայց. Գ. տիպ, 'ի 1901. միջակ դիրքով, 510 երես.	20		30
ՄԱՐԳԱՐԷԱԿԱՆ ՅԱՐԱԿՑՈՒԹԻՒՆ ընդ մէջ Հին եւ Նոր Կտակարանաց. աշխատասիրեաց Գէորգ Աւետեան Զաքարեանց, տպեալ 'ի 1875. ութածալ. 85 երես. հարց և պատասխանի ձեւով և պարզ գրաբար լեզուաւ,			

	Կէս. Ղշ.	Փր	Փռ. Ղշ.
յորում համառօտակի Նոր Կտակարանն Հնով կը հաստատուի Մարգարէից վկայութեամբ ·	1	20	
ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԹՂԹՈՅՆ ՊՕՂՈՍԻ · յօրինեաց Պետրոս Արքեպիսկոպոս Բերդումեանց · տպեալ 'ի 1850 · ութածալ · 804 երես · առ Եփեսացին գրուած թղթոյն մեկնութիւնն է · մեկնական և պարզ գրաբար ոճով ·	25		36
ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ · տպեալ 'ի 1853 · ութածալ · 324 երես · թարգմանութիւն Ներսէսի Լամբրոնացւոյ 'ի Յոյն բնագրէ ·	10		15
ՄԻԽԱՅԵԼԻ ՊԱՏՐԻԱՐՔԻ ԱՍՈՐԻՈՑ ժամանակագրութիւն · տպեալ 'ի 1871 · ութածալ · 622 երես · գործ ԺԲ· դարու , ժամանակագրական պատմութիւն գրաբար լեզուաւ և ծանօթութեամբ հանդերձ · սկիզբն կ'առնու Ադամէն և կը շարունակէ մինչև ցՆերսէս Շնորհալին · Ուր կը նկարագրէ զանազան ժամանակ պատահած սաստիկ սովերն , շարժերն , հերձուածողաց երևան գալն , Քաղկեդոնականաց արարքներն , Անտիոքայ , Հռովմայ , Աղեքսանդրու , Եփեսոսի , Կոստանդնուպոլսոյ , Երուսաղէմի և Հայոց Էջմիածնի և Կիլիկիոյ Աթոռակալաց անուններն ժամանակագրական կարգաւ մինչև իւր օրերն ·	16		25
— Նոյնն՝ այլ գրչագրաց հետ բաղդատուած և առանց ծանօթութեան ·	12		20

Յ

	Կէս. Ղշ.	Փր	Փռ. Ղշ.
ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ · Բաղդատական ուսումնասիրութիւն · գործ Պ· Ֆ· Մուրատեան · Բ· և Գ· հատորներ ·	43	24	
ՅՈՎՀԱՆՆԷՍ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ Պատմութիւն Հայոց · Բ· տիպ , 'ի 1867 · ութածալ , 464 երես · վեց այլ և այլ ձեռագրաց հետ բաղդատեալ , գործ Թ· դարու · յորում գլխաւորապէս պատմուած են նոյն ժամանակի անցքերն ·	10		
ՅՈՎՍԷՓ ԳԵՂԵՑԻԿ · գրեաց Տ· Գրիգորեան խաչակ Ծ· Վ· Գաղատացի , տպեալ 'ի 1849 · ութածալ · 358 երես · 60 գիշերի բաժանեալ սիրուն գրաբար լեզուաւ վիպասանութիւն , յորում Յովսէփ իւր Ասանէթ կողակցին հետ խօսելով՝ զնա կը հրահանգէ և կը հրաւիրէ յԱստուածպաշտութիւն և 'ի բարոյականութիւն ·	10		

Ն

	Կէս. Ղշ.	Փր	Փռ. Ղշ.
ՆԱՐԵԿ կամ մատեան ողբերգութեան Գրիգորի Նարեկացւոյ , տպեալ 'ի 1868 · ութածալ · 518 երես · մեծ գիրքով · և միջակ տառերով ·	12		20
— Նոյնն՝ ծոցակիր · ամենափոքր գիրքով և մանր տառերով · տպագրուած 'ի 1897 · ութածալ , 600 երես · յորում կը գտնուին և Բժշկութեան Աւետարանք ·	10		20
ՆՈՐ ԴԱՍԱԳԻՐՔ ՏԻԵԶԵՐԱԳՐՈՒԹԵԱՆ · աշխատասիրեաց Գ· Ս· Խապայեան , տպեալ 1876 · ութածալ · 240 երես · աշխարհաբար լեզուաւ , դասական կարգաւորութեամբ և դիւրըմբռնելի եղանակաւ 'ի պէտս Ազգային դպրոցաց ·	8		
ՆՈՐ ԹՈՒԱԳԻՏՈՒԹԻՒՆ · աշխատասիրեաց Վ· Վ· Յակոբեան · Ա· Հատորն տպեալ 'ի 1880 · կը բովանդակէ ամբողջական թուոց գործողութիւնքն դասական կարգաւորութեամբ , և ընդարձակ բացատրութեամբք ·	5		
Բ· Հատորն , տպեալ 'ի 1881 · կը պարունակէ հասարակ և տասնորդական կոտորակաց գործողութիւններն դասական կարգաւորութեամբ և ընդարձակ բացատրութեամբք ·	5		
ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆ · տպեալ 'ի 1867 · ութածալ , 800 երես · գեղեցիկ գիրքով և մաքուր տպագրութեամբ ·	12		20

Շ

	Կէս. Ղշ.	Փր	Փռ. Ղշ.
ՇԱՐԱԿԱՆ ՋԱՅՆՔԱՂ ·	138		

Ո

	Կէս. Ղշ.	Փր	Փռ. Ղշ.
ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ Ի ՄԵԾՆ ՆԵՐՍԷՍ · գրեաց Սարգիս Մ· Վանանդեցին , տպեալ 'ի 1863 · ութածալ · 68 երես · յորում Մեծն Ներսէս Հայրապետի մահն և Պապ թագաւորէն թունաւորիլն նկարագրուած է թատերական չորս արարուածով ·	4		
ՈՒԽՏ ՀԱՅՐԵՆԱՍԻՐԻ · գրեաց Մ· Վ· Մուրատեանց , Բ· տիպ , 'ի 1874 · ութածալ · 58 երես · յորում բացատրուած է Հայրենասիրութիւնն աշխարհիկ սիրուն ոճով (*).	1		

Կէս․ Ղր․ | Փր | Փառ․ Ղր․

ՌՈՒՍՈՒՄՆ ԲԱՐՈՒՑ․ գործ Փրանկլինոսի Սուաւէի․ Թարգմանեալ Զամուռճեան Պատուելին, տպեալ 'ի 1857․ ութածալ, 605 երես․ երեք մասանց բաժանեալ գրաբար լեզուաւ, որոց առաջի մասին մէջ կ'ուսուցանէ առանձն եղած պարտաւորութիւնն․ երկրորդին մէջ՝ առ ընկերն, իսկ երրորդին մէջ առ Աստուած (*). — 18 | | 30

ՌՈՒՍՈՒՄՆ ՊԱՐՏՈՒՑ․ աշխատասիրեաց Պետրոս Ս․ Շանշեանց, Բ․ տիպ, 'ի 1874․ ութածալ, 324 երես․ Տասնաբանեայ պատգամաց և Օրինաց բացատրութիւնն, դասական դիւրըմբռնելի եղանակաւ և աշխարհաբար լեզուաւ, յորմէ ամենայն հասակի անձինք դիւրաւ կարող են ուսանիլ առ Աստուած, առ ընկերն, առ հանուր մարդկութիւնն և առ իւրեանց անձինս եղած պարտաւորութիւնքն․ — 8 | | 15

ՌՈՒՍՈՒՄՆ ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹԵԱՆ․ Թարգմանեալ 'ի Գաղղիարէն լեզուէ 'ի Հայ աշխարհաբար լեզուաւ Մելքոն Պ․ Փափազեան, տպեալ 'ի 1869․ ութածալ, 162 երես․ յորում համառօտակի ամփոփուած է տրամաբանութեան կանոններն դասական եղանակաւ և պարզ ոճով․ — 5

Պ

ՊԱՏԱՍԽԱՆԻՔ ՄԽԻԹԱՐԱՅ ՔԱՀԱՆԱՅԻ ՍԿԵՒՌԱՑՒՈՅ․ Ը․ տիպ, 'ի 1860․ ութածալ, 70 երես․ յորում հեղինակն զօրաւոր փաստերով կը հաստատէ ԺԲ․ Առաքելոց համապատիւ լինելն, և կը հերքէ Հռովմէականաց նորանոր վարդապետութիւնն 'ի մասին գլխաւորութեան Պետրոսի, մի միայն զՔրիստոս դաւանելով Գլուխ Եկեղեցւոյ․ — 4

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ․ աշխատասիրեաց Խորէն վարդապետ Մխիթարեան (*). — 7

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԹԱԹԱՐԱՑ․ տպեալ 'ի 1870․ ութածալ, 76 երես, գործ Նախնեաց ԺԳ դարու, գրուած Ականց վանաց Ստեփան վանահօր հրամանաւ․ Թաթարաց մեր Ազգին հասուցած չարիքն կը պատմէ․ — 2

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԼԵՆԿ ԹԻՄՈՒՐԱՅ․ Թարգմանեալ 'ի Տաճիկ բնագրէ 'ի Հայ աշխարհիկ լեզու Աստուածատուր վարդապետ Տ․ Յովհաննէսեան․ յորում մանրամասնաբար նկարագրուած է Լենկ Թիմուրայ աշխարհաւեր արշաւանք-

Կէս․ Ղր․ | Փր | Փառ․ Ղր․

ներն, երկրակործան աւերմունքներն, անխիղճ գերեվարութիւնքն և վերջապէս բոլոր գործած չարութիւնքն․ — 10 | | 20

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՈՒՂՂԵՑՈՅՑ Ս․ ՏԵՂԵԱՑ․ քաղուածոյ Թարգմանութիւն աշխարհաբար լեզուաւ․ տպեալ 'ի 1872․ ութածալ, 295 երես․ որ ուխտաւորաց Ս․ Տեղիքն շրջելու համար մեծ դիւրութիւն և առաջնորդութիւն կ'ընծայէ․ — 6

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ 'ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ Ս․ ԵԿԵՂԵՑՒՈՅ․ 'ի Մ․ վարդապետէ Մուրատեանց․ տպեալ 'ի 1872․ ութածալ, 640 երես․ յորում աշխարհաբար լեզուաւ, դասական դիւրըմբռնելի եղանակաւ և ժամանակագրական կարգաւ նկարագրուած են մարդկութեան վիճակն մինչեւ Քրիստոսի գալուստն և Քրիստոսի Տնօրէնութիւններն և ապա Թադէոս և Բարթուղիմէոս Առաքելոց քարոզութենէն սկսեալ մինչեւ 1872 թուականն Հայաստանեայց Եկեղեցւոյ իւրաքանչիւր դարու և շրջանի մէջ պատահած կրօնական և քաղաքական պատմութիւնքն, բարբարոսներէն կրած դառն հալածանքներն, Յունաց և Լատինաց կողմանէ քաշած բռնաբարութիւնքն, և իւր անխախտ և անշարժ տեւականութիւնն 'ի վերայ հիման Քրիստոնէական սուրբ Կրօնի․ — 16 | | 25

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆԻ․ աշխատասիրեաց Ս․ Վ․ Խապայեանց, Գ․ տիպ, 'ի 1881․ ութածալ, 340 երես․ աշխարհիկ լեզուաւ և դասական կարգաւորութեամբ համառօտակի կ'աւանդէ Հին Ուխտի պատմութիւնն․ 36 պատկերներով ներկայացնելով գլխաւոր դէպքերն, 'ի պէտս Ազգային դպրոցաց․ — 7 | | 15

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԻ․ 'ի Մ․ վարդապետէ Մուրատեանց, Գ․ տիպ 'ի 1882․ ութածալ, 340 երես․ ուր Ս․ Աւետարանի Պատմութիւնն պատկերազարդ եւ ժամանակագրական կարգաւ, դասական եղանակաւ, մաքուր աշխարհաբար լեզուաւ կանոնաւորուած է դպրոցաց համար, 'ի վերջն պատմութեանց բարոյական համառօտ յորդորականներով հանդերձ․ — 7 | | 15

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ Ս․ ԳՐՈՑ․ գրեաց Եղիա Մ․ Տնտեսեան, տպեալ 'ի 1867․ ութածալ, 440 երես․ յորում կ'աւանդին Հին և Նոր Կտակարանաց Պատմութիւնքն համառօտակի

	Կէս. Ղշ.	Կէս. Փր	Փառ. Ղշ.
և գասական եղանակաւ կանոնաւորուած, աշխարհաբար լեզուաւ դպրոցաց համար.	8		15
ՊԱՏՄՈՒԹԻՒՆ Ս. ԼՈՒՍԱՒՈՐՉԻ. գրեալ 'ի Պաղտասար անուն յումեմնէ Հայ տաւերով եւ Տաճիկ լեզուաւ, տպեալ 'ի 1901. ութածալ, 112 երես. մեր Ս. Գրիգոր Լուսաւորիչ Հայրապետին Տրդատ Թագաւորէն կրած չարչարանաց Պատմութիւնն է.	3		

Ս

	Կէս. Ղշ.	Կէս. Փր	Փառ. Ղշ.
ՍԱՂՄՈՍ. տպեալ 'ի 1868. քառածալ, 498 երես. խոշորագիր և մեծագիր ծերոց և կարճատես մարդոց հմր. (*)	10		20
ՍԱՂՄՈՍ. տպեալ 'ի 1869. քառածալ, 375 երես. խոշորագիր և փոքր ինչ տարբեր գիրքով.	6		10
ՍԱՂՄՈՍ. տպեալ 'ի 1873. ութածալ, 364 երես. միջակ գիրքով դպրոցաց համար.	6		10
ՍԱՂՄՈՍ. տպեալ 'ի 1874. ութածալ, 511 երես. ամենափոքր ծոցակիր գիրքով.	8		15
ՍԱՂՄՈՍ. մի և նոյն ձեւով, տպեալ 'ի 1870. ութածալ, 413 երես.	3		
ՍԱՆԴՈՒԽՏ ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ ՀԱՅԿԱԿԱՆ. հեղինակութիւն Թովմաս Թերզեանի, թարգմանեաց 'ի Գաղղիարէն Օր. Մաթիլտ Բ. Ֆէրուհ-խան. տպեալ 'ի 1881. ութածալ, 238 երես. — Հայերէն և Գաղղիարէն լեզուաւ երես առ երես տպուած թատերական հինգ արարուածով կը նկարագրէ Սանդխտոյ կուսի աշակերտին Թադէոս Առաքելոյն և նահատակութիւնը (*).	8		15
ՍԻՐՈՒՆ ԶԲՕՍԱՐԱՆ. տպեալ 1875. ութածալ, 88 երես. Թարգմանութիւն Գրիգոր վարդապետի Կ. Պոլսեցւոյ. հետաքրքրաշարժ փոքրիկ գրքոյկ, որ կը պարունակէ իւր մէջ Տան հիւթաւոր Գոյակաց կամ Ըմպելեաց դիմառնական բանախօսութիւններն, բարոյական մարզիչ եւ հրահանգիչ եղանակաւ: Այն բանախօսութեանց կամ ատենախօսութեանց մէջ իւրաքանչիւր Գոյակ կը ջանայ զինքն ջատագովել. իսկ ընդհակառակն՝ իւր դիմախօսն կը ձգնի նորա վնասակար յատկութիւններն յերեւան հանել, որով մին զմիւսն յաղթահարե-			

	Կէս. Ղշ.	Կէս. Փր	Փառ. Ղշ.
լով կը նշանակեն զմիմեանս և կը պարզեն, որ վնասակար է մարդոյ՝ չարաչար գործածութիւն ոգելից եւ գրգռիչ Ըմպելեաց.	2		
ՍՈԿՐԱՏ, Յոյն Պատմագրի՝ Երուսաղէմի և Էջմիածնայ ձեռագրաց Բաղդատութիւն.	4		
ՍԻՕՆ ԱՄՍԱԳԻՐ. 1866—77 Թուականի. քառածալ, 24 երեսէ բաղկացեալ, ամեն ամիս հրատարակուած աշխարհաբար լեզուաւ. պարունակութիւնն է Ազգային, Բանասիրական, Գրագիտական, Կրօնական, Բարոյական եւ Ժամանակագրական, իւրաքանչիւր տարեկանը միատեղ կազմեալ.	30		
ՍՏՈՐԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ. գրեաց Մկրտիչ Վ. Արծրունի, տպեալ 'ի 1859. (*).	10		

Վ

	Կէս. Ղշ.	Կէս. Փր	Փառ. Ղշ.
ՎԱՀՐԱՄԱՑ ՎԱՐԴԱՊԵՏԻ Ատենադպրի Լեւոնի արքայի՝ բան 'ի յայտնութիւն Տեառն և յօծումն Լեւոնի Գ. Արքայի, տպեալ 'ի 1875. փոքրագիր տետր.	2		
ՎԱՐԺՈՒԹԻՒՆ ՓՈԽԱՍԱՑ ՄԱՆԿԱՆՑ. տպեալ 'ի 1903. ութածալ, 256 երես. յորում են Մաղթանք. Աղօթք, Քարոզք և փոխք, 'ի պէտս վարժութեան մանկանց.	6		

Տ

	Կէս. Ղշ.	Կէս. Փր	Փառ. Ղշ.
ՏԱՂԱՐԱՆ.	15		
ՏԱՆՎԻՑԼ ՏԵՂԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ. Թարգմանեաց 'ի Գաղղիերենէ Զամուրճեան պատուելին, տպեալ 'ի 1855. ութածալ, 125 երես. հին Երուսաղէմի և Սողոմոնեան Տաճարին վերայ ճառօրէն գրուածք (*).	3		
ՏԱՐԵՐՔ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԵԱՆ.	5		
ՏԱՐԵՐՔ ԻՄԱՍՏԱՍԻՐՈՒԹԵԱՆ. տպեալ 'ի 1852 (*).	8		
ՏԵՍՉՈՒԹԻՒՆ ՀՈՎՈՒԱԿԱՆ. Թարգմանեաց Զամուրճեան Յ. Պատուելին. տպեալ 1867. ութածալ, 336 երես, գրաբար համառօտ քարոզք առ վերատեսուչս և հօտս Եկեղեցւոյ, առ Տնօրէնութիւնն Քրիստոսի եւ առ Ս. Կուսանն.	8		

	Դր. Ղ.	Դր. Փ.	Փոխ. Ղ.
ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹԻՒՆ. Պատուելի Գրիգորի Փէշտմալճեան, տպեալ 'ի 1855. (*).	3		
ՏՕՆԱՑՈՅՑ. տպեալ 1868. ուԹածալ, 522 երես. երկու հատոր. ըստ սարարողութեան Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ կարգաւորեալ և պատշաճեալ.	10		20

Քաղ

ՔԱՀԱՆԱՅԱԹԱՂ քաղեալ 'ի Մայր – Մաշտոցէ.	15		
ՔԵՐԱԿԱՆ Հայերէն, տպեալ 'ի 1872. դիւրին եղանակաւ.		20	
ՔԵՐԱԿԱՆ Հայ — Գաղղիարէն, Բ. տիպ. 1882. ուԹածալ, 75 երես. Գաղղիարէն լեզուն դիւրաւ ուսանելու համար, յորում բաց 'ի այբբենարանէն կան Գաղղիարէն լեզուաւ Բարոյական, Բնական եւ Աշխարհագրական հատուածներ.	2	20	
ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԳԱՂԻԵՐԷՆ ԼԵԶՈՒԻ. աշխատասիրեաց Եղնազար Մուրատեան, տպեալ 'ի 1869. ուԹածալ, 120 երես. ուր հայերէն լեզուաւ բացատրուած են Գաղղերէն քերականութեան կանոնները.	3		
ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ ՀԱՅԵՐԷՆ ԼԵԶՈՒԻ. շարադրեաց Կ. Վ. Արապեան, տպեալ 'ի 1870. ուԹածալ, 216 երես.	4		
ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆ հանդերձ արաբերենով մանր տղայոց համար, տպեալ 'ի 1870. ուԹածալ, 31 երես.	2		

Օ

ՕՐԱՑՈՅՑ. Սկսեալ 'ի 1866 է և շարունակաբար հասեալ մինչեւ յայժմ.	1		

ՀԱՅ ԱՍՍՌ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ZUUՌ-ԱԴՄ ՍՍՌ
Ս. ԱՄ. Ա. ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ

ՀՀ Ազգային գրադարան
NL0133608